ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 41

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջների՝ *ավագանին որոշում է.*

Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 11 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 55-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻՋԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 42-Ն

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասն» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի «Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 55-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հավելվածի հատված 1-ի 1352 տողի «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» «Ընդամենը» 4-րդ սյունակի «2500.0» թիվը փոխարինել «4000.0» թվով և «Վարչական մաս» 5-րդ սյունակի «2500.0» թիվը փոխարինել «4000.0» թվով:

2) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2111 տողի 01 բաժին 1 խումբ 1 դաս «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» 4112 Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «5700.0» թիվը փոխարինել «7200.0» թվով և «Վարչական բյուջե» 7-րդ սյունակի «5700.0» թիվը փոխարինել «7200.0» թվով:

3) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2491 տողի 04 բաժին 9 խումբ 1 դաս «Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)» 8411 Հողի իրացումից մուտքեր հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «-1000.0» թիվը փոխարինել «-43000.0» թվով և «Ֆոնդային բյուջե» 8-րդ սյունակի «-

1000.0» թիվը փոխարինել «-43000.0» թվով:
4) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2451 տողի 04 բաժին 5 խումբ 1 դաս «Ճանապարհային տրանսպորտ» 5113 Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «8013.4» թիվը փոխարինել «37513.4» թվով և «Ֆոնդային բյուջե» 8-րդ սյունակի «8013.4» թիվը փոխարինել «37513.4» թվով:
5) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2641 տողի 06 բաժին 4 խումբ 1 դաս «Փողոցների լուսավորում» 5112 Շենքերի և շինությունների կառուցում հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «1000.0» թիվը փոխարինել «13000.0» թվով և «Ֆոնդային բյուջե» 8-րդ սյունակի «1000.0» թիվը փոխարինել «13000.0» թվով:
6) Հավելվածի հատված 6-ի՝

«ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ»

2641 տողի 06 բաժին 4 խումբ 1 դաս «Փողոցների լուսավորում» 5134 Նախագծահետազոտական ծախսեր հոդվածի «Ընդամենը» 6-րդ սյունակի «0.0» թիվը փոխարինել «500.0» թվով և «Ֆոնդային բյուջե» 8-րդ սյունակի «0.0» թիվը փոխարինել «500.0» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻՋԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 43

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները՝ *ավագանին որոշում է.*

1. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Ալվարդ Աֆրիկայի Արրահամյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0302-0042 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 13092021-07-0048) 0.117514 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու համար:
2. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Արմեն Մարքսի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0306-0001 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 09092020-07-0095) 0.2903 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:
3. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Գեորգի Վյաչեսլավի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0302-0022 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 24092021-07-0034) 0.081 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, անասնապահական տնտեսություն կառուցելու համար:
4. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Հակոբ Առաքելի և Էմիրա Վազգենի Վիրաբյաններին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0315-0224 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 05102021-07-0069) 0.56702 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:
5. Նշված փոփոխությունները ներառել համայնքի հողերի ընթացիկ տարվա հաշվեկշռում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ